ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4132-Ա « 15 » դեկտեմբերի 2023 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ի միջև կնքվել է ԵՔ-ԷԱՃԾՁԲ-23/38-1 ծածկագրով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծառայության մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արխիվացման, կարման-կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների»:

«Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ն խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները չի պահպանել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջներն ամբողջությամբ՝ Արխիվային գործի վարման բաժնում առկա թվով 1450 մշտական և երկարաժամկետ պահպանության գործերից կանոնակարգվել է միայն Երևանի քաղաքապետի 2017 թվականի կարգադրությունները /թվով 34 գործ/, իսկ Երևանի քաղաքապետի որոշումները, վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումները, Երևան քաղաքի ավագանու որոշումները և Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված ճարտարապետական աշխատանքային նախագծերը չեն կանոնակարգվել:

Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3-րդ կետի ա. ենթակետի պահանջներով՝ միակողմանի լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի դեկտեմբերի 5-ին և պայմանագիրը դեկտեմբերի 6-ի դրությամբ համարվում է միակողմանի լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Աննա Աղաջանյան Հայրապետի» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ